ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«21» 02 2025 թ.
№ ՊԵՆ-ԳԳԼ-193

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 01505177
ՀՀ, ք. Երևան Ծ. Իսակովի 48/2
էլ. փոստի հասցե՝ astghik59@gmail.com
Հեռ.՝ + +374 10 726 726

ՀՀ պաշտպանության նախարարության և «Աստղիկ Գրատուն» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 26.02.2024թ. կնքված N ԳՀԾՁԲ-24-8/3-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում /Համաձայնագիր N 1, առ. 20.05.2024թ/ Ընկերությունը պետք է մատակարարեր 1 955 հատ գրասենյակային մատյան Համաձայնագրի կնքումից հետո՝ 30 օրացուցային օրվա ընթացքում, որից 940 հատը չի մատակարարվել: Ինչպես նաև ամբողջությամբ չի մատակարարվել հետևյալ ապրանքները /ուսումնական տարում գումարտակի (դիվիզիոնի) մարտական պատրաստության հաշվառման մատյան 350 հատ/, վաշտի (մարտկոցի) մարտական պատրաստության հաշվառման մատյան 1350 հատ/, սպառազինության և տեխնիկայի համարային հաշվառման և ամրակցման մատյան, Ձև 28 650 հատ, հրթիռահրետանային սպառազինության պահեստամասերի և գույքի հաշվառման մատյան, Ձև 26ա 200 հատ, անվադողերի հաշվառման մատյան, Ձև 35ա 200հատ, ստորաբաժանումներում նյութական միջոցների առկայության և շարժի հաշվառման մատյան, Ձև 26 1400 հատ, նյութական միջոցների առկայության և շարժի հաշվառման մատյան, Ձև 27 (A4) 1400 հատ, ճաշարանում սնվողների հաշվառման մատյան, Ձև 42 200 հատ ապրանքները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. փետրվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Համաձայնագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Աստղիկ Գրատուն» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

փոխանցել 270 397 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 5.3 կետի համաձայն) և 22 463 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 5.2 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 25.12.2024թ. ներառյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 454 458 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 612 870 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ մինչև 2025թ. մարտի 3-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 454 458 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 612 870 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Աստղիկ Գրատուն» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. մարտի 3-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ